

Համայնքում

- Ստեղծեք խումբ, որը պատասխանատու լինի Ձեր համատիրության թափոնների կառավարման համար: Ստեղծեք կոմպոստացնող փոքրիկ օբյեկտ: Կոմպոստը կարելի է օգտագործել պուրակներում:
- Պարզեք, արդյոք կան համատիրություններ, որոնք ունեն թափոնների կառավարման փորձ:
- Թափոնների հիմնախնդրի լուծման համար ներգրավեք Ձեր հարեւաններին:

Դպրոցներում եւ մանկապարտեզներում

- Բնապահպան դպրոցները երեխաների համար շրջակա միջավայրի նկատմամբ առողջ վարքագծի ձեւավորման լավ օրինակներ են:
- Կազմակերպեք մրցույթներ՝ կանաչ դրոշմ նվաճելու համար:
- Դպրոցներին ներգրավեք բնապահպանական քարոզարշավներին:
- Աշակերտներին հանձնարարեք թափոնների տեսակավորումը:
- Երեխաների հետ քննարկեք թափոնների դասակարգման հարցը:
- Տպագրեք եւ երեխաներին տրամադրեք թափոնների մասին պարզունակ նյութեր:

Խելամիտ մոտեցում կոշտ կենցաղային թափոնների կառավարման խնդրին

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության կողմից:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019,
Բաղրամյան պող. 24 դ,
սենյակ 609,
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ www.awhhe.am



Թափոնը որպես երկրորդային հումք



Տեղական մակարդակում

Տեղական ինքնակառավարման մարմինները թափոնների կառավարման հարցում ունեն մի շարք պարտականություններ՝

- մշակել թափոնների կառավարման կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ ռազմավարություններ; վերջիններս պետք է հաշվի առնեն ապագա թափոնների կանխանշված քանակը եւ տեսակները, նաեւ թափոնների ծավալների նվազեցմանը եւ դրանց կազմության փոփոխմանն ուղղված միջոցները; ռազմավարությունը պետք է ներառի ժամանակացույց, ծախսերի գնահատական, ինչպես նաեւ թափոնների ծրագրի տնտեսական գնահատական՝ կապված քաղաքապետարանի/գյուղապետարանի բյուջեի եւ հարկերի հետ;
- աշխատել արդյունաբերողների եւ քաղաքացիների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: Ապահովել վստահելի վիճակագրություն թափոնների տեսակների, աղբյուրների, տարածքում դրանց քանակության մասին; հասարակությունը պետք է իրազեկ լինի իր բնակավայրում թափոնների հիմնախնդրին;
- երաշխավորել հասարակության լայն մասնակցությունը թափոնների կառավարումը ծրագրավորելու ողջ ընթացակարգին՝ նախապատրաստումից մինչեւ իրականացում;
- աջակցել թափոնների կանխման, վերօգտագործման եւ օգտահանման/վերամշակման վերաբերյալ կրթական գործունեությանը, ինչպես նաեւ նախաձեռնել քարոզարշավներ՝ ուղղված հասարակության իրազեկության բարձրացմանը;
- պարբերաբար գնահատել եւ հրապարակել տվյալներ թափոնների ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ: Թափոնների մշակման լավ օրինակներ կարող են ծառայել կրթական հաստատությունները, գրասենյակները եւ այլ օբյեկտներ:

Բնակչության օժանդակությունը Տանը

- Նվազագույնի հասցրեք Ձեր մեղքով գոյացող թափոնների քանակը:
- Գնեք ապրանքը քիչ փաթեթավորմամբ կամ առանց փաթեթանյութի:
- Հնարավորության դեպքում կրկին օգտագործեք փաթեթանյութը՝ այն դեն նետելու փոխարեն:
- Կոմպոստացրեք օրգանական նյութը:
- Վտանգավոր թափոնները հեռացրեք հատուկ նախատեսված վայրերում:
- Տեսակավորեք թափոնները հետագա օգտահանման համար: Ձեռքի տակ ունեցեք գնումների պայուսակ, որպեսզի ամեն անգամ ստիպված չլինեք նոր տոպրակներ գնել:
- Նախքան որեւէ իր դեն նետելը, պարզեք, թե ով կարող է դրա կարիքն ունենալ: Օրինակ ծառայեք Ձեր երեխաներին:

Թափոնը որպես երկրորդային հումք

Հայաստանում տարեկան գոյանում է մոտ 1 615 800 խոր. մ, իսկ մայրաքաղաքում 939 500 խոր. մ աղբ: Թափոնները վտանգավոր են ոչ միայն շրջակա միջավայրի, այլև մարդու առողջության եւ կյանքի համար: Չպետք է թույլ տալ, որ թափոնների գոյացման ներկայիս քանակները պահպանվեն: **Լավագույն տարբերակը մեր մեղքով գոյացող թափոնների ընդհանուր քանակի պարզապես կրճատումն է:**

Ով է պատասխանատու պետական մակարդակում

Պետական մարմինները պատասխանատու են թափոնների վերաբերյալ օրենսդրության եւ թափոնների կառավարման խելամիտ քաղաքականության եւ ծրագրերի մշակման ու զարգացման համար: Թափոնների պետական կառավարումը պետք է հիմնվի 4 սկզբունքների վրա՝

- կանխարգելում,
- աղտոտողից գանձվող վճարումներ,
- նախազգուշական սկզբունքներ
- եւ թափոնների կառավարում անմիջապես թափոնի առաջացման աղբյուրի մոտ:

